# ԽՕՍՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
# ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 180-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Սրտի անհուն գոհունակութեամբ իմացանք Ռուսաստանի և Նոր Նա-
խիջևանի Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Տիրան Արքեպիսկոպոս Կիւրե-
ղեանից որ Դեկտեմբերի 12-ին արժանավայել հանդիսութեամբ նշուելու
է Մոսկուայի հռչակաւոր ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ հիմնադրութեան
180-ամեակը:

Մեզ համար սրտի քաղցր պարտք է անձնապէս և յանուն Ամենայն Հա-
յոց Կաթողիկոսութեան, Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռի՝ Ս. Էջ-
միածնի ողջունել այս բարեբաստիկ և հպարտառիթ տօնակատարութիւ-
նը, որ վստահաբար պիտի լինի ողջ Մոսկուայի մեր հայ սիրեցեալ ու հա-
ւատարիմ հայ զաւակներին համար հոգեկան ցնծութեան և հոգևոր ու ազ-
գային վերածնութեան և վերանորոգութեան մի սքանչելի առիթ:

Մենք քաջատեղեակ ենք այն փառաւոր անցեալի ժառանգութեանը, որ
նուիրական թողօնն ու կտակն է ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ հիմնադիր Լա-
զարեանների գերդաստանին և Ճեմարանի կեանքն ու գործունէութիւնը այն-
քան շքեղօրէն մարմնաւորած ու կենսաւորած մեծ մտաւորականներին՝ Տր-
նօրէններին, Ուսուցչապետներին և Ուսանողներին: Մեր ԺԹ. և Ի. դարերի
պատմութիւնը Լազարեան Ճեմարանով նոր լոյս և առաւել ճոխութիւն ստա-
ցաւ: Արևելեան գիտութեանց շրջագծի մէջ Լազարեան Ճեմարանը կարևորեց
և արժևորեց հայ ժողովուրդի լեզուի, կրօնի, գրականութեան, արուեստի,
մշակոյթի պատմութիւնը: Նա չեղաւ նեղ իմաստով մի ակադեմական հաս-
տատութիւն՝ ամփոփուած հայութեան կեանքի սահմաններում: Ռուսական
մեծ մշակոյթի և այլ մշակոյթների բնագաւառներից նա քաղեց մեծ արժէք-
ներ և նրանք կենսաւորեց մեր ժողովրդի մշակութային կեանքի անդաստա-
նում:

Լազարեան Ճեմարանը այսօր մեր ազատ ու անկախ Հայաստանի Հանրա-
պետութեան Դեսպանատան կեդրոնատեղին է և միանգամայն հայ մշակոյ-
թի ծանօթացման և զարգացման օջախներից մէկը Մոսկուայում:

180-ամեակի առիթով վստահաբար մեծ հպարտութեամբ պիտի նշուեն
անցեալի իրագործումները: Դա բնական է և արդար: Բայց ոչ բաւարար:
Մեր հայրական յորդորն է որ 180-ամեակը դառնայ վերանորոգման, վեր-
աշխուժացման մի սքանչելի առիթ մեր ժողովրդի համար ի Մոսկուա և ի
համայն Դաշնային Պետութիւնն Ռուսաստանի: Անցեալի փառքը իր ամբող-

ջական իմաստը կը գտնի ներկայի և ապագայի նորանոր իրագործումներով և ներդրումներով:

Սիրելիք, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում աղօթում ենք Ձեզ համար և կոչ ենք անում որ նորոգեալ սիրով և յաւելեալ նուիրումով արժեցնէք այս պատուաբեր տօնակատարութիւնը որպէսզի առաւել ևս պայծառանայ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ անունը մեր նոր պատմութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա.**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 6 Դեկտեմբերի 1995 թ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի